Արտատպված է՝ Դերենիկ Դեմիրճյան, Երկերի ժողովածու, հատոր IV, Ե., 1978:

ԱՎԵՐԱԿՆԵՐԻ ՄԻՁԻՑ

Տպավորությունը ոչ միայն ծանր է, այլև վեր ամեն ենթադրությունից: Բութ գործիքի հարվածի պես շշմեցնում է այդ հիմնական ավերածությունը և նրա հետևանքները[1]: Մի քանի վայրկյանի հարված, և ստեղծվեց մի քանի տարիների դժվար, հիմնավոր, անհետաձգելի և կասեմ՝ անսովոր գործ, պետք է շինել քաղաքը իր շրջակա գյուղերով և պետք է շինել այնպես, որ դիմանա երկրաշարժին:

Վերջնական ստույգ և լրիվ տեղեկությունները կտա վիճակագրությունը: Բայց մոտավոր պատկերը հետևյալն է: Բոլորովին, հիմնահատակ կործանված են՝ Ալեքսանդրովկա, Դահառլի, Բայանդուր, Արայըղ, Թուրքի Ղարաքիլիսա, Քյալալի, Տովշան Ղշլաղ, Ղազարապատ գյուղերը. Փոքր Ղարաքիլիսա՝ 70 տոկոս, Ճլոխան՝ 60 տոկոս, Դյուզքանդ՝ 50 տոկոս, Օճախղուլի՝ 10 տոկոս, Մոլլա Մուսա 11 տոկոս, Թոչիրօղլի 30 տոկոս, Սվանվերդի 133 տուն, Արմութլի 127 տուն, Ղռըխ 113 տուն, Աղին 40 տուն, Ղեղաճ 36 տուն, Իմրխան 46 տուն, Ղափլի 13 տուն, Բաբուլի 12 տուն, Բոզդողան 7 տուն, Շիրվանճուղ 20 տուն, Ղութնիղշլաղ 21 տուն, Բողազ-քյասան 9 տուն: Այնուհետև Օղչօղլի, Օրթաքիլիսա, Թափառի, Թափադոլլակ, Մեծ Քիթի, Ներքին Ղանլիճա, Մահմուդճուղ, Չըփլի, Ղոշավանք, Մոլլա-Գյոզչա, Հոռոմ, Սոնգյուրլի գյուղերը կամ մի քանի շենքերով, կամ մասնակի վնասված են:

Չենք կարծում, թե ստույգ վիճակագրությունը գա թեթևացնելու այս թվերը, որովհետև ավելի մանրամասն և ըստ ամենայնի քննությունը պիտի պարզի այն աշկարա հանգամանքը, որՇիրակի գյուղերում ոչ միայն ավելի անպետք տներ են մնացել, այլ անվնաս տներն էլ անպետք են երկրաշարժին դիմադրելու տեսակետից:

Երկրաշարժին դիմադրելու տեսակետ—ահա այս է Լենինականի գլխավոր, հիմնական հարցը:

Քաղաքն ավերված է երեք քառորդով:

Սա հասարակ աչքի չափ է: Ստույգ ճարտարապետական քննությունը կարծում ենք չպետք է նվազեցնի այս չափը, որովհետև քանի որ չկա ոչ մի ապահովություն ցնցումների կրկնության՝ ոչինչ չի կարելի ասել այն տների վերաբերմամբ, որ «չեն վնասվել»:

Պետք է աչքի առաջ ունենալ նաև այն հանգամանքը, որ Լենինականն իր շրջակայքով հին էր: Անտառներից հեռու մի վայր լինելով՝ նա հնարավորություն չի ունեցել իր կտուրների փայտեղենը նորոգելու: Հիսուն-վաթսուն տարվա կտուրներ կան: Սրա վրա ավելացրեք նաև այն, որ պատերը շինված են եղել մի կործանարար ավանդական ձևով, որ վարպետից վարպետ անցել է տարածվել. այդ երեք շերտ՝ պատի ձևն է. երկու շերտ շարվածք, մեջը լիցք, առանց իրար հագնելու ձևով, անկյունների քարերը բաց: Այս մասին ճարտարապետական խորհուրդը կտա իր բացատրությունները, բայց հասարակ աչքի համար, անգամ, պարզ է, թե ինչ հանցավոր ձևով են շինված Լենինականի տները: Իսկ գյուղերի խրճիթները ներկայացնում են կանոնավոր շարված քարակույտեր, որ ցրիվ են եկել ցնցումից: Փտած գերանների վրայի հողը կոտրել է գերանները և նստել:

Այսպիսով մենք կանգնած ենք նոր քաղաքի և առնվազն նոր 20—25 գյուղի շինության առջև:

Մի քանի վայրկյանի ցնցում և տասնյակ միլիոնների գործ…

Արտակարգ Հանձնաժողովը փռել է իր ցանցերն ամբողջ գավառում և քաղաքում: Կյանքը դուրս է եկել իր հունից, դարձել է տարօրինակ, անսովոր, նախնական: Մարդիկ ամեն օր գիշերելու տեղ են որոնում, փոխվում են տնից կայարան, կայարանից մի որևէ վրան, վրանից… Թիֆլիս, Բաքու, Հյուսիսային Կովկաս, Լենինգրադ…

Սկսված է մի չտեսնված տարերային պայքար տարերքի դեմ: Ամբողջ գավառը, գյուղացիությունը, քաղաքի բնակչությունը, տեղական կազմակերպությունները կառավարության գլխավորությամբ այդ պայքարի մեջ եռում են: Քաղաքի կայարանը եռում է Թիֆլիսի գծով և՛ փրկարար փայտեղենը, և՛ գյուղի ճամփաներով սայլերը կրում են:

Նախ պետք է շինել փայտեղեն Շիրակը.— բարակների շրջանն է: Ամենից կարևոր խնդիրն այդ է: Մինչև մի կողմից— Արագածի լանջերից իջնում է ձյունը՝ մյուս կողմից պատրաստվում են թշնամու առաջխաղացմանը դիմադրելու:

— Մեր ձանը մնաց մի շաբաթ.— ասում են գյուղացիք, և նոր ես հասկանում, թե ինչ ասել է «ձյունը գլխիդ» խոսքը: Պետք է փրկել Շիրակի անասունները: Ոչխարը մի կերպ կդիմանա առաջին ցրտերին, բայց եզներն ու կովերն արդեն դողում են… Պետք է շտապել:

Փայտեղեն Շիրակին հետևելու է քարե Շիրակը: Բայց երկրորդը գարնան գործ է: Եվ եթե փայտեղենը չլինի— ժողովուրդը կկոտորվի: Ահա թե ինչու ամենագնահատելին, որ արվում է այս ռոպեիս— այդ բարաքների և գետնափոր գոմերի գործն է:

Բնակչության բաց արած վարկերը մեծապես կանգնեցրին տարերային խուճապը: Ամեն տանտեր հնար ունի դրամ ստանալու իբրև պարտք և նորոգելու իր տունը կամ բարաքներ շինելու:

Արդեն քաղաքի կայարանի մոտ մի հրապարակում շինվում՝ են բարաքներ 6000 հոգու համար: «Գեղացոց թաղում», որ շատ է տուժած՝ արդեն իրենք բնակիչները գործի են անցել: Քաղաքի այլ վայրերում ևս նույն աշխատանքն է:

Ամեն բան իրար է խառնվել: Մի տեղ հուսահատվում են, մյուս տեղ՝ պայքարում: Արդեն ամբողջ դաշտում երկու տիպի մարդիկ են մշակվել այդ տեսակետից: Քաղաքի խուճապը նվազել է նախ այն պատճառով, որ սկսված է վերաշինությունը, ու ապա որ քաղաքից հեռանում է խուճապային տարրը— կանայք և երեխաները: Տղամարդիկ մնում են կռվելու երկրաշարժի դեմ: Ամեն նշաններից երևում է, որ լենինականցին պիտի մնա և կմնա: Այս հաստատ է:

Բայց տեսարանը, համենայն դեպս, ազդու է դեռ:

Միայն ներկա լինելով կարելի է հասկանալ, թե ինչ լայն մասսայական օգնություն է պետք այս խնդրում:

Տեսարանը սարսափելի է. բնության տարերքը և նրա դիմաց մարդկային տարերքը— ժողովուրդը: Մի տիտանական կռիվ է սկսված այս երկուսի մեջ, և այդ ոչ թե մի վեպում, այլ իրականության մեջ:

Ահա Լենինականը:

Տները ճեղքված մարմինների պես բաց են արել իրենց ընդերքը.— ներսի պատերը, գերանները, միջնորմները, ծակուռները: Լենինականցու ներքին կյանքը, նրա տան ներքին գաղտնիքը դուրս են եկել փողոց.— Տոլաբներ, ծակուռներ, ննջարան, սեղանատուն, միջանցքը աչքիդ առջև է: Դռանը կամ տանից մի քիչ հեռու արկղներից, գերաններից և կարպետներից շինած կիսավրաններ, «դռանը» «տանտերը»՝ իր ընտանիքով— իր սոխը, կարտոֆիլը, գազարը փռած սպասում է:

Աղետը նրա առջև դրել է բազմաթիվ երկրաբանական, տեխնիկական, նյութական և բարոյական հարցեր: Չի կարողանում լուծել: Քեզ է հարցնում:

— Կըսեն՝ գետինը պիտի պատռի՝ ղո՞րթ է:

— Ե՞րբ պիտի վերջանա «թերմաշը»…

— Տեխնիկը ինչո՞ւ չեկավ:

— Ինճեները ի՞նչ կըսե, աս տանս բանը ի՞նչղ պիտի եղնի:

— Գործկոմն ի՞նչ է վճռե. ինձի պիտի տախտակ տա՞ն:

— Մեզի չեք խղճա…

— Գիշերս շատ գեշ ցնցեց, կըսեմ՝ երթանք Ռուսաստան:

— Տախտակը թե՞զ կտան, թե ճամփա ընկնենք:

Իսկ երբ բացատրում ես, համոզում՝ ցույց է տալիս իր քանդված տունը և դարձյալ հարցնում.

– Հըբը ի՞նչ էնեմ…

Այո, խնդիրները շատ են հիմնական, արագ, պաշարող, անհետաձգելի և տարերայնորեն լայն:

Այսպիսի բազմաթիվ հարցեր ունի ամեն մի անհատ… մի քաղաքում և 38 գյուղում: Ամենքին պետք է ոչ միայն պատասխան, այլև իրական օգնություն հասցնել:

Սկսված է կատաղի պայքարը տարերքի դեմ:

Ահա կարմիր աղբյուրի թաղը: Համատարած ավերակների կույտ: Մի ավերակի առջև մի մարդ գետնի վրա քարեր է շարում:

Մի արշին բարձրացրել է, և երկու աչք «տուն» է շինում:

— Ի՞նչ բանի ես, բարեկամ:

— «Տուն» կշինեմ. էսքանը պատ, մնացածը տախտակ, Հըպե ի՞նչ էնեմ: Էս մի աչքը դրկիցիս համար է, մեկը ինձ համար: Դամիրչի եմ:

Մի քիչ վերև մի սիրուն տախտակե տնակ է շինած: Մտնում ենք ներս: Վառարան, մաքրություն, անկողնի ծալքն իր տեղը, ամանները կարգին, մի երիտասարդ կին «տուն» է ավելում:

— Կարելի՞ է մտնել:

— Ինչո՞ւ չի կարելի: «Համեցեք»:

— Ինչպես ե՞ք, գո՞հ եք:

— Շատ լավ: Տա՛ք:

Հարցը լուծված է: Ամուսինը տունը շինել է, ինքը գնացել գործի: Կողքի հարևանը՝ նոր է վերջացնում նման մի տախտակե տուն:

— «Ժաժքի» կողմը (հարվածի վտանգավոր կողմը) հող կլեցնես՝ հեչ բան չի եղնի:— Հըմը գործս մնաց: Փուռը քակվել է…

Ահա մի գաղթական: Տունը քանդվել է, կարպետե «տունը», ողորմելի մի բան, ինքը փոքրիկ կամուրջի գլխին մի երկու արկղ խնձոր է ծախում:

— «Գործիս» վո՞վ աշե, «տանս» վո՞վ աշե, Գործկոմ վո՞վ երթա դիմելու…

Մի ուրիշ արհեստավոր չգիտե ինչ անի. իր հին տունը կիսաքանդ է, նոր «տուն» չունի:

— Քանդի, գերանները հանի, որ բարաք շինես:

— Հը, հանե՞մ… ախր տունը ի՞նչղ քակեմ:

— Ի՞նչ տուն, ծռվել պրծել է. քանդիր, գերանները հանիր:

— Հը…— մտածում է:

Եվ շարժի օրից մինչև հիմա մտածում է: Խեղճ մարդիկ, հանգիստ միամիտ նստած էին իրենց պապական տների մեջ, իրենց հին աշխարհի հեքիաթներով— հանկարծ մի հարված ստիպում է←··· վճռել տիեզերական հարցեր: Մի քանի վայրկյանում նա պարտավոր է դառնալ և՛ տնտեսագետ, և՛ մունիցիպալ գործիչ: Իր պստլիկ ծածկի տակ համեստ արհեստավորը դրված է բաց երկնքի տակ, տիեզերքի դիմաց և պարտավորել է փիլիսոփայել և շինարարել:

Այո, ամեն լենինականցի թե՛ քաղաքում, թե՛ գյուղում պարտավոր է օգնելու կառավարությանը: Այս պարադոքս է— բայց այսպես է: Օգնել կառավարությանը, որ սա կարողանա օգնել իրան աղետյալին:

Ահա և «հարյուր տոկոսով» ավերված գյուղերը: Նրանք բոլորը նման են իրար: Քարակույտեր— դրանք քանդված գյուղերն են: Գյուղի կողքին մի մեծ ավերված շենք— եկեղեցին և կամ դպրոցը:

Մի քիչ հեռու բլրակի վրա սև քարեր— գերեզմանոցն է: Թարմ հողաթմբերն աղետի թաղված զոհերն են:

Գյուղացիք խմբված են ալյուրի ջվալների շուրջը, ու ալրաթաթախ եռյակի անդամն ալյուր է բաժանում: Զինվորական սայլ խոհանոցը ծխում է— կերակուրն եփում: Մեծ վրանը Կարմիր խաչի հիվանդանոցն է:

Ահա ավերակների մեջ ինչ-որ մարդիկ պեղումներ են կատարում: Սահմանապահ ռուս դիվիզիայի մասերն են, որ անձնվիրաբար օրն ի բուն աշխատում են գյուղերում:

Տեղ-տեղ վրաններ են զարկված, իսկ ուր պակասում է վրանը՝ կարպետներից մի կերպ ծածկ է շինած, ու պատսպարված են կանայք և երեխաները: Տղամարդիկ դուրսն են գիշերը: Արդեն հազի ձայներ են լսվում չորս կողմը: Անասունները հանդումն են, նրանք կարող են մինչև ձյունը վայելել չորացած արոտը: Գաղթականների են նման, ամենքը:

Վրանների առջև շները դնչները ոտների մեջ՝ քնում են: Կանայք տնտեսության հետևից են ընկած.— լվացք, կար, բանջարի չորացում և այլն: Ոմանք կտուրը բաց խրճիթի հատակին թոնիրը վառել՝ հաց են թխում: Ահա մի պառավ կին բուի նման նստել է ավերակ տան քարակույտին՝ աչքերը չռել և գետնին է նայում: Երեխաներն ուրախ վազվզում են վրանների շուրջը, իսկ ավելի պստլիկները փորսող են տալիս գետնի վրա: Երևույթն առօրյա է: Առաջին խուճապն անցել է, մնացել է շորշոփը: Բայց ապրելուծարավը և վերաշինության հույսերը նոր վճռականություն ու եռանդ են տվել ժողովրդին: Հերոսավայել կերպով է նա հանդիպում աղետին: 753 հոգիանոց Դահարլուն, որ կորցրել է 105 հոգի՝ թողել է սուգը և սկսել է վերաշինության պայքարը: Նա գործնական հարցեր է տալիս, գործնական դիմումներ:

— Ընկե՛ր, հը՛, վախո՞ւմ եք էլի:

— Ձանըմ, վախի սրեն (հերթը) անցեր է:

— Քա՞նի հոգի են մնացել «տակը»:

— 105 հոգի:— Տախտակները չի՞ եղնի որ գեղի քովը թափեն մաշինի ճամփով:

Ընկեր Երզնկյանը[2] խոստանում կարգադրել, նրանք գոհանում են:

Բոլոր գյուղերի սուր կարիքն արդեն ձևակերպված է գրեթե և նույնությամբ. առաջինը՝ ջրաղացը նորոգել և ապա բարաքներն ու գոմերը շինել:

— Ընկեր Երզնկյան, ջաղացը շինել տվեք, ջաղացը, մեր հացը աղանք՝ աչքերս դուսը չպահենք:

Մարդիկ չեն ուզում կողմնակի ալյուրը: Բայց մեծ կարիք ունեն շորեղենի: Ճիշտ է, վերմակներ ու այլ շորեղեններ բաժանված է մի մասին, բայց դարձյալ կարիքը շատ մեծ է: Գյուղացիների շորերը պատռված են. արդեն իսկ մի բան չէին աղետից առաջ, իսկ աղետի ժամանակ գիշեր-ցերեկ կռիվ են տվել հողի, քարի ու գերանի հետ և հագուստի ծլանգները կախվել են վրաներից: Բոլորի ձեռքի ափերը ճաքճքել են չափազանց աշխատանքից: Նրանք փոշոտ են, անքուն, աչքերն այրվում են:

Անսովոր բաներ շատ կան: Արդեն իսկ աղետն իր մեծությամբ և դրած խնդիրներով մի մեծ անսովորություն է: Պետք է հասկանալ երկրաշարժը, նրա պատճառները, ընթացքը — դա՝ գործնական խնդիր է գյուղացու համար և ոչ վերացական գիտական հարցասիրություն:

— Կըսեն՝ գեղը գետնին տակը պիտի անցնի, ղո՞րթ է:

— Կըսեն գետնի տըկեն կրակ պիտի դուս գա. ի՞նչ կըսե կառավարությունը, պիտի դադարի՞ աս թերմաշը:

— Ո՞վ է ձեզ այդ տեսակ բաներ ասում. ինչու՞ եք հավատում:

— Եսի՞մ. կըսեն բանաստեղծ մարդիկ նստեր քներ են ու ըսեր, թե գետինը պիտի պատռի:

— Դատարկ բաներ են. դուք ձեր տները շինեցեք:

— Տները կը շինենք. հըմը էդ անտեր ձեներն, օր կիմանանք, ձեռքերս կը թուլանա:

Դիմում ենք պրոֆեսոր Լեբեդևին՝ խնդրելով որ մի երկու խոսքով հանգստացնի ժողովրդին:

Պրոֆեսորը բացատրում է երկրաշարժի պատճառները և խոստանում է, որ երկիրը «չը պատռի»:

Թարգմանները բացատրում են և կրկնելով պրոֆեսորի տերմինները, գործ են ածում տեքտոնական, պլաստ, լեռնակազմային բառերը և անզգուշաբար ասում են, որ երկրի տակը դատարկ է:

Փեշերիցը քաշում ենք, բայց ուշ է արդեն…

Դե գյուղացիքն իրենք էլ գիտեն, որ դատարկ է և ի՞նչ խոսք՝ երկրի կեղևը մի քանի սաժեն է…:

Գերեզմանոցում ենք: Պրոֆեսորն իր ընկեր մասնագետների հետ քննում է գերեզմանաքարերի շարվածքները: Գյուղացիք եկել հետևում են:

— Ну расскажите, как началось землетресение?— հարցնում է երկրաբան Զ-ն մի գյուղացու:

— Առաջ զարկեց ու մի տեսակըմ ձեն հանեց:

— Как гром, или как орудийные залпы?

— Էդման էր, մի տեսակըմ ամուր ձեն հանեց:

— Сначала бууу?

— Էդման էր, բուու ու՛…

— Музыкальный?

Ի՞նչ ասի, այնպես շփոթված է եղել խեղճը, որ չի հիշում որոտի՞ էր նման, թե երաժշտական ձայնի:

Մի կողմ եմ քաշում գյուղացուն և հասկացնում, որ երկրաբաններն ուզում են երկրաշարժի բնույթը, ուղղությունը և այլ հատկություններն ուսումնասիրել: Դա կարևոր է ապագայում ուսումնասիրել: շենքերի ձևը որոշելիս:

— Ջանը՛մ, ինչ կուզեն էնեն՝ մենակ թե աս ժաժքին առաջն առնեն:

— Ժաժքին առաջը չի առնվի: Ձեր տները պիտի այնպես շինվեն, որ էլ ժաժքը չքանդի:

— Ներողութեն, էդոր բան չունինք ըսելու. մեննակ թե տախտակները թող հասնի, դուսն եմ մնացել:

Եվ բոլոր գյուղացիները գյուղացիաբար զգալով, որ «դրսից» եկածները մի ցանկություն ունեն— որ գյուղացիները չգաղթեն՝ թափանցիկ խորամանկությամբ բոլոր հարցերը նախ տանում են երկրաբանական բնագավառները, մի մանյովր են անում այն մտքով թե՝ եթե երկրաշարժը կրկնվելու է իրենք գաղթեն և վերջը խոսքը բերում սխմեցնում են տախտակի շուրջը: Դա գյուղացու մեթոդն է տիեզերական ճամփաներով տախտակ ստանալ: Գյուղացին նման է երեխայի. գիտե որ տախտակը բերում են, բայց թնկթնկում է: Չուշացնեն: Մենք ամեն կերպ հանգստացնում ենք նրանց: Բայց ավելի լավ հանգստացնում է տախտակը, որ արդեն երևացել է: Մի քանի օրից հետո այդ խնդիրը կլուծվի:

Գյուղացիների գետնափորները լիովին պատրաստ են: Տեսնենք որքան հարմար կլինեն դրանք: Տված ձևերը քննություն են բռնելու ծախսի, հարմարության և առողջապահական տեսակետից: Եվ դեռ հարց է, այդ գետնափորն է հարմար, որ ներկայացնում է երկու արշինանոց մեծ փոս, վրան ծածկած, թե՞ զինվորական ձևինը— երկու շարք հողի թախտեր, վրան շեղկտուր, երկու լուսանցք, մի կողմը քարե օջախ: Վերջինս շատ նման էր գյուղի օդային, և կարիք չէր լինի թիթեղ վառարանի, բայց շատ չմտնենք մասնագիտական հարցերի մեջ: Ձմեռվա փորձը ցույց կտա, թե որն է հարմարը… Մի դժբախտություն կա, որ աղետյալ գյուղերի մեծ մասը համարյա գետի մակարդակի վրա են և մի արշինից ավելի փորելիս՝ ջուր է դուրս գալիս: Ուրեմն բարաքների և գոմերի ձևը այժմյանից մեծ պատասխանատվություն է դնում ճարտարապետների վրա:

Սա կարող ենք ասել՝ մասնագետ չլինելով հանդերձ…Տախտակե Շիրակը մեզ պիտի հասցնե քարե Շիրակին, և կհասցնի՝ եթե հիմիկվանից այդ գործը մտածված տարվի:

Ինչպես տեսնում եք, փայտեղենը՝ տախտակը, գերանը վճռական դեր են կատարելու աղետյալ վայրերի համար: Փայտեղենը հասցվում է, բայց կա մի տարերային ծավալ, որի առջև անզոր է այս մի քանի օրը երկաթուղին: Այստեղ պետք է օգնության հասներ ինքը գյուղացին իր տան փայտեղենով: Բայց և այստեղ է, որ հանդիպում ենք մի տարօրինակ հանգամանքի: Լավ է այն գյուղերի հարցը, որ բոլորովին են ավերված, որովհետև գյուղացին ճարահատ բանեցնում է իր փայտն ևս: Բայց կիսավեր կամ ճաքած խրճիթի տերը չի ուզում քանդել, հանել գերանները: Նախ հույս ունի տախտակ և գերան ստանալու և ապա գյուղացիաբար մտածում է, վայ թե իմը բանեցնեմ, տեղը ոչինչ չստանամ… Նա կստանա անշուշտ, նրան չեն թողնի անգամ իր փտած խրճիթում ապրի, բայց առայժմ նա տատանվում է— իսկ ձյունն արդեն մոտ է…

Արտակարգ հանձնաժողով, տեխնիկական խորհուրդ, ճարտարապետներ, տեխնիկներ, գործկոմ, եռյակներ, կարմիր խաչեր, արհեստավոր, կարմիրբանակայիններ— ահա որոնց ձեռքին է ավերված Շիրակն այս րոպեիս:

Քաղաքի երկաթուղու կայարանում կանգնած վագոններից մեկումն են տեղի ունենում նիստերը, այդտեղ են գալիս և իրար փոխարինում կառավարության անդամները, կուսակցության պատասխանատու անդամները:

Ամենքն այդտեղ են դիմում աղետի հետ կապ ունեցող գործով: Իսկ քաղաքում կենտրոնը Գործկոմն է, որ պաշարված է բնակչությամբ:

Հևիհև աշխատանքը, ընդհանուր մասնակցությունը գործին՝ քաղաքի մեջ մտցրել է արտակարգ եռուզեռ:

Բնակչության կենսունակ մասը՝ արհեստավորներն իրենք իսկ անցել են գործի և բարաքներ շինում: Ու մինչ խուճապային տարրը՝ մանր առևտրականները հեռանում են քաղաքից, արհեստավորները մնում են:

Մտնում ենք մի բարաք: Եվ ահա հանկարծ մեզ (ավելի ճիշտը՝Ավետիք Իսահակյանին)[3], ուրախ բացականչությամբ դիմավորում է տանտերը՝ ուստա Մացակը, որ ուրագը ձեռին աշխատում է: Նա արդեն մահճակալներն ու կամոդը տեղավորել է պատրաստի սենյակներում, շինում է «ընդունարանը»: Առույգ արհեսավորը շատ ուրախացավ, տեսնելով իր վաղեմի բարեկամին:

Նստեցինք մահճակալի վրա: Հարց ու փորձ, հիշողություններ, կատակ, ծիծաղ:

— Ջանըմ, լավն էլ էս էր, բան չունիս, բլավ՝ բլավ:

Ուստա Մացակի տունը փլեր էր, և նոր տունն ավելի է դուր գալիս նրան:

— Վայ ես քու հավատդ անիծեմ Ավո… էս ի՞նչ լավ բան էրիր՝ եկար: Թե աստվածդ կը սիրես, տղոցը (մեզ) առ՝ մի օրըմ արի:

Ուստա Մացակը մեզ քեֆի է հրավիրում: Խոստանում ենք գնալ, երբ «տունը» պատրաստ լինի:

Բարաքներում կյանքն սկսվում է արդեն: Արդեն լոտո են խաղում… Արտակարգ հանձնաժողովի վագոնի պահապան— «պապաշան» հայտնում է անդամներից մեկին, որ «երեսուն անգամ» եկան նրան հարցրին քաղաքից, շատ շտապ:

— Գնացեք, տեսեք՝ ինչ է պատահել:

Մարդը գնում է և տեսնում, որ իրան նշանդրեքի են հրավիրել… վրանի տակ:

Այցելեցինք պոլիգոնը, որտեղ որբերն են:

Շենքերն անվնաս են, որբերն ազատ են աղետից: 9-րդ տարեդարձի օրն էր, և ահա կարմիր արևի տակ, լայն հրապարակում որբերը պար էին բռնել: Մի հսկայական շուրջպար, որին մասնակցում էին 200 հոգի: Նրանք տոնական զգեստներով են, բոլորովին նոր կոշիկներով:

«Աբու Լալայի» վերադարձը[5] մեծ ուրախություն է պատճառում նրանց, և ահա նրանք ցնծալից հորձանքներով վազում, պաշարում են բանաստեղծին:

Այդ ուշիմ, հետաքրքրվող, կյանքի ծարավով լցված մանուկներն ու պատանիները մեծ ուրախություն են պատճառում վերադարձող բանաստեղծին:

Մենք հեռանում ենք որբաստանից՝ նվագների, ուրախ երգերի ձայները մեր ականջների մեջ, իբրև մի սրտապնդիչ հոգատարություն հսկայական ավերածության, որ ճնշում էր մի օր առաջ մեզ, երբ այցելել էինք աղետյալ վայրերը:

Ավելի մեծ հակադրություն է, անգամ շատ ազդու՝ տեքստիլ գործարանի շենքը, որին այցելելով՝ մարդ իրան զգում է մի բոլորովին այլ քաղաքում: Ծանրանիստ, հսկայական զանգվածքով նայում է նա այցելուին և ճնշում է, համոզում: Բետոնն ու երկաթը, որ նրա կմախքն են, նրան դարձրել են անխոցելի՝ երկրաշարժի դիմաց: Սյուների ծառուղի լինի կարծես շենքի մեջ տնկած: Միջի մասից պարի ձայներն են գալիս: Գնում ենք այնտեղ: Բանվորներն իրենց ընտանիքներով հավաքվել են այդ բաժնում և հեղափոխության 9-րդ տարեդարձն են տոնում: Նրանք մեզ հրավիրում են մասնակցել իրենց քեֆին: Սիրով մոտենում ենք և գինու բաժակներն առնելով, խմում ենք այս ուրախ դասի կենացը, որ չի վախենում ո՛չ երկրաշարժից, ո՛չ իր թշնամիներից, ոչ էլ կյանքի դժվարություններից:

Մի ռուս բանվոր, որի մատը փաթաթած է շորի կտորով՝ խնձոր է համեցեք անում մեզ: Նա Թիֆլիսից է եկել մի ուրիշ հայ բանվորի հետ: Մտածում ես՝ ի՞նչ պիտի լինի սրա մասնագիտությունը: Եվ ահա մեզ ճամփու դնելիս տանում են գործարանի սարքած մասը, ռուս բանվորն իր կտրած մատը մեկնում է դեպի երկարաձիգ խողովակների սիստեմը— կենտրոնական տաքության սարքավորումը նրա ձեռքի գործն է:

— Ես եմ շինել. բոլորը ես եմ շինել, ասում է նա երեխայի ուրախությամբ, ոչ մի նորոգման կարիք չպիտի լինի, այնպես ամուր ու ճիշտ եմ շինել:

Մենք ուրախ տրամադրությամբ հեռանում ենք այս շինարարության կոթողից:

Եվ մտածում ես,— ինչ տարբերություն քանդված Շիրակի և այս կանգուն Լենինականի միջև: Որքան անճարակ է նա, և որքա՞ն կարող է սա: Իհարկե, սրտի մեծ ցավով ես դիտում «Գյումրիի» կործանումը: Դա մեր սիրելի Տարասկոնն էր, ինքնատիպ, կոլորիտային, հումորով լի: Բայց այդպես է կյանքը. ստորերկրյամի հարված գալիս է մի քանի րոպեում կործանում է այդ քաղաքը և նրան կանգնեցնում է նոր կյանքի պահանջների առջև:

Այսպիսով, Լենինականը ոչ թե կործանված քաղաք է, այլ անցողիկ շրջանի մի վայր, որտեղ ավերակների միջից դուրս է գալիս նոր քաղաքը: Այժմ նրա կորիզը տեքստիլ գործարանն է անշուշտ, որին պիտի կցել մնացած հիմնարկները և երկաթուղին: Արհեստավորները, ծառայողները կը մնան, և քաղաքի կերպարանքը կը փոխվի:

Նոր շենքերի հարցը լուծվում է այս անգամ ավելի հիմնական և տարօրինակ կերպով, քան եղել է մինչև այժմ: Սեյսմական շենքեր—ահա նոր քաղաքի լոզունգը:

Ամեն փողոց, ամեն տուն պիտի հարմարվի երկրաշարժի բնույթի, հատկության և ուղղության համաձայն:

Երկրաբանությունը, որ մինչև այժմ մեզ համար եղել է աստղագիտության նման մի «հոգեշահ» առարկա՝ ներկայումս գործնական, առօրյա մի պետք է այլևս: Ինչո՞ւ ավերվեցին քաղաքն ու այնքան գյուղերը: Դրա պատճառը ոչ թե հարվածի ուժգնությունն է եղել, այլ տների թուլությունը: Իրար վրա հասարակ ձևով շարված քարերը փլավի պես ցրիվ եկան ցնցումից: Քաղաքի մեծ շենքերն անգամ սխալ շարվածքի պատճառով նույն վիճակին ենթարկվեցին: Կործանված Ալեքսանդրովկա գյուղում անկործան մնացին պոլսեցի գաղթականների ցեխե աղյուսով շինած տնակները, իսկ քաղաքում բոլոր խորհրդային նոր շենքերը: Ուրեմն շենքի ձևը, պատի շարվածքը մեծ նշանակություն ունի այս տեսակետից: Ապա նաև նշանակալից է այն հանգամանքը, թե տունը հարվածի նկատմամբ ինչ ուղղություն է բռնել: Քաղաքի շենքերը, գյուղի մեծ շենքերն ու գերեզմանաքարերը քանդվել են «սիստեմով»: Ահա ինչ ասել է երկրաբանություն:

Վերականգնման այս եռուն շրջանում առաջին տեղը բռնում է, անշուշտ, երկաթուղին, որ պատվով դուրս եկավ իր դերում: Նա գյուղերի և քաղաքի փրկարար ձեռքն էր հենց առաջին րոպեից: Հակառակ աղետի առաջացրած մեծ դժվարություններին՝ երկաթուղին գործում է կրկնակի կանոնավորությամբ: Աշխատանքից խուսափում չի եղել բանվորների մեջ: Երկաթուղու

վարչությունը հերթով ամեն ծառայողի տալիս է 5 օր արձակուրդ գյուղերը գնալու: Ղալթախչի կայարանից մինչև Կարաբուրուն նոյեմբերի ռոճիկները տրված են: Զակդեպոն դուրս չի գալիս ապառիկները: Բանվորներն ապահով են բարաքների, վագոնների և շենքերի նորոգման կողմից:

Այս նշանակում է ոչ միայն բանվորների վիճակն ապահովել, այս նշանակում է գյուղերի օգնությունն ապահովել այն տարրի միջոցով, որը միայն կարող է այդ օգնությունը հասցնել գյուղերին,— երկաթուղին և բանվորությունը:

Կարմիր խաչի և Մահիկի միության զանազան հիմնարկների և մասսաների օգնությունը քաղաքական դաստիարակչական մեծ դեր է կատարում այս օրերում: Շիրակի գյուղացին զգում է այդ և իրան չի տեսնում աղետի առջև մենակ ու անտեր:

Այս անդուլ եռուզեռի աղմուկի մեջ չպետք է անտես անել մի լուռ, աչքից խուսափող տարրի, որի ձայնը չլսեցինք մի անգամ:

Դա գյուղի փլատակները մաքրող և շինափայտերը հանող և իր կյանքը քանդվող շենքի դռներին վտանգող մոխրագույն ռուս կարմիրբանակայինն է, որ անձնվիրությամբ, համբերությամբ և սիրով կատարում է իր եղբայրական պարտքը աղետավոր ժողովրդի հանդեպ: Նրանք կորած են ավերակների մեջ, չեն մոտենում մեզ, չեն խոսում:

Եվ հեղափոխության 9-րդ տարեդարձի օրը նրանցից 140 հոգի 5 ժամ շարունակ գետնափոր էր շինում քաղաքի կայարանի մոտ:

Այս է ահա թռուցիկ տպավորությունն այն հսկայական պայքարի, որ տեղի ունի այս րոպեին Լենինականում:

Լենինականը վերականգնվում է ավերակների միջից: Այդ պարզ է և փաստ է այլևս: Եվ նրանք, ովքեր այս րոպեիս տարված են աղետի համար ցավելով և տխուր մտքերով, ավելի լավ կանեն մասսայացնեն Լենինականի օգնության գաղափարը:

«Թուրքերն» ու «վրացիները» արդեն փաստորեն հասել են օգնության:

Հերթը «հայերինն» է…

ԱՎԵՐԱԿՆԵՐԻ ՄԻՋԻՑ

(Էջ 44)

Առաջին անգամ տպագրվել է ԽՀ, 1926, N 260, 261, 263: Ինքնագիրը չի պահպանվել: Տպագրվում է նույնից:

1 Նկատի ունի Լենինականի երկրաշարժը, որը տեղի է ունեցել 1926 թ. հոկտեմբերի 22-ին: ՀՍՍՀ ժողկոմխորհի և ՀԿ(բ)Կ Կենտկոմի նախագահության 1926 թ. հոկտ. 26-ի որոշումով ստեղծվեց աղետյալներին նախնական օժանդակություն ցույց տվող արտակարգ հանձնաժողով:

2 Երզնկյան Արամայիս (1878—1937)— կուսակցական և պետական գործիչ: Այդ ժամանակ եղել է ՀՍՍՀ հողժողկոմ:

3 Այս շրջագայության ժամանակ Դեմիրճյանի հետ է եղել Ավ. Իսահակյանը, որը նոր էր վերադարձել արտասահմանից (1926 թ. հոկտ. 9-ին):

4 Հոկտեմբերյան հեղափոխության 9-րդ տարեդարձը՝ հին տոմարով հոկտեմբերի 26-ին:

5 Խոսքը Ավ. Իսահակյանի մասին է: